ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 352 Լ

ք.Արտաշատ

«04» դեկտեմբերի 2023թ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» 1550-Լ որոշմամբ հաստատված հավելված N 2-ը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պլանները՝ համաձայն N 1-7 հավելվածների:
2. Սույն որոշման մասին իրազեկել մարզպետի տեղակալներին, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին, մարզային փրկարարական վարչության պետին:

Восстановимая подпись

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արարատի մարզպետի
2023թ. 12.04 -ի N 352 որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայությունը (այսուհետ ծառայություն) ստեղծվում է մարզի տարածքում առողջապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունների բազայի հիման վրա:

1.2 Ծառայությունը ստեղծվում է (վերակազմակերպվում է) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ:

1.3 Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» 384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզային քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.4 Ծառայության գործունեության նպատակը և առարկան է իր իրավասությունների շրջանակներում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

1.5 Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետը:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՅՆԵՐԸ

2.1 Ծառայության խնդիրներն են.

ա) քաղաքացիական պաշտպանության առողջապահական ոլորտի միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի բարձր պատրաստականության աստիճանների բերման ժամանակ,

բ) ծառայության կազմավորումների ստեղծումը և ապահովումը մշտական պատրաստության վիճակում,

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումը և մարզի քաղաքացիական պաշտպանության պետին անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

դ) լիազոր մարմնի կողմից կառավարման մարմիններին և բնակչությանը ազդարարման օժանդակության ցուցաբերումը, ռազմական դրության ժամանակ մարզի պահանջներից ելնելով՝ բժշկական ծառայության աշխատանքների համակարգումը:

2.2 Ծառայությունն իր վրա դրված խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) ծառայության կանոնադրության և պլանի մշակումը, սահմանված կարգով համաձայնեցման և հաստատման ներկայացումը,

բ) մարզի տարածքում բժշկական ծառայություն մատուցող հաստատությունների հետ փոխհամագործակցության իրականացումը, հակառակորդի հարձակման վտանգի և հարձակման ժամանակ բնակչության բժշկական ապահովման, տուժած բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը,ռազմական դրության և արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ դեղորայքի, բժշկական պարագաների, տրանսպորտային միջոցների տրամադրման հայտերի ձևավորումը և անհրաժեշտ հաշվարկների իրականացումը,

գ) շրջակա միջավայրի, խմելու ջրի աղբյուրներում և համակարգերում ջրի որակի վիճակի ու վարակվածության դիտարկման և հսկողության իրականացման կազմակերպումը, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը և իրականացումը,

դ) ծառայությունում ներգրավված հաստատություններից բացի, մարզի վարչական տարածքում բժշկական ծառայություն մատուցող այլ ընկերությունների հետ փոխհամագործակցության աշխատանքների իրականացումը,

ե) արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների հետևանքների գնահատումը, դրա հիման վրա ծառայության պլանի ճշգրտումը,

զ) մասնակցությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժությունների անցկացմանը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ծառայության վրա դրված քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման համար պահանջվող ուժերն ու միջոցները ստեղծվում են մարզի տարածքում բժշկական ծառայություն մատուցող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա,

3.2 ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը, իսկ անմիջական /ընթացիկ/ ղեկավարումը՝ ծառայության պետը,

3.3 քաղաքացիական պաշտպանության միջոցառումները պլանավորելու և ղեկավարելու համար ստեղծվում է ծառայության շտաբ,

3.4 քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար համապատասխան կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա ծառայությունը ստեղծում է իր գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

4. ԾԱՌՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ՝

ա) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման,

բ) պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների կատարման համար,

գ) հետևում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստականությանը,

դ) սահմանում է հսկողություն քաղաքացիական պաշտպանության համակարգի համապատասխան պատրաստականության աստիճանների բերման ընթացքում ծառայության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նպատմամբ,

ե) կազմակերպում է ծառայության ղեկավար կազմի ազդարարումը և հավաքը,

զ) ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանը և ապահովում է դրանցով նախատեսված միջոցառումների իրականացումը,

է) հանրապետական բժշկական ծառայության հետ կազմակերպում է համագործակցություն և տեղեկատվության փոխանակում,

ը) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի ՔՊ պետին:

4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏԸ՝

ա) կազմակերպում և ապահովում է ծառայության շտաբի անձնակազմի ղեկավարումը,

բ) համակարգում և ապահովում է ծառայության պետի հրամանների, կարգադրությունների և հրահանգների կատարումը,

գ) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում ծառայության կազմավորումների կողմից պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ,

դ) ելնելով օպերատիվ իրավիճակից ճշգրտում է ծառայության պլանը և իրականացվող միջոցառումների ցանկը,

ե) ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ծառայության պետի հետ կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը,

զ) վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և ելնելով դրանից ծառայության պետի հետ պատրաստում է առաջարկություններ ուղղված մարզի քաղաքացիական պաշտպանության պետին,

է) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ փոխգործակցությունը,

ը) ծառայության պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է ծառայության շտաբի պետը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-ն որոշման համաձայն:

Հավելված N 2
ՀՀ Արարատի մարզպետի
2023թ.12.04 -ի N 352 որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քաղաքացիական պաշտպանության բնակչության հատուկ սպասարկումների ծառայությունը (այսուհետ ծառայություն) ստեղծվում է մարզի տարածքում բնակչության հատուկ սպասարկումների ծառայություններ մատուցող կազմակերպությունների բազայի հիման վրա:

1.2 Ծառայությունը ստեղծվում է (վերակազմակերպվում է) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ:

1.3 Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» 384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզային քաղաքացիական պաշտպանության բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.4 Ծառայության գործունեության նպատակը և առարկան է իր իրավասությունների շրջանակներում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

1.5 Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է մարզպետի աշխատակազմի մասնագետ:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՅՆԵՐԸ

2.1 Ծառայության խնդիրներն են.

ա) քաղաքացիական պաշտպանության բնակչության հատուկ սպասարկումների ոլորտի միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի բարձր պատրաստականության աստիճանների բերման ժամանակ,

բ) ծառայության կազմավորումների ստեղծումը և ապահովումը մշտական պատրաստության վիճակում,

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումը և մարզի քաղաքացիական պաշտպանության պետին անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

դ) լիազոր մարմնի կողմից կառավարման մարմիններին և բնակչությանը ազդարարման օժանդակության ցուցաբերումը, ռազմական դրության ժամանակ մարզի պահանջներից ելնելով՝ բնակչության հատուկ սպասարկումների ծառայության աշխատանքների համակարգումը:

2.2 Ծառայությունն իր վրա դրված խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) ծառայության կանոնադրության և պլանի մշակումը, սահմանված կարգով համաձայնեցման և հաստատման ներկայացումը,

բ) բնակչության հատուկ սպասարկումների ծառայության գծով՝ բնակչության շրջանում անվերադարձ կորուստների հաշվառման, դիակների հուղարկավորման աշխատանքների կազմակերպումը,

գ) ծառայությունում ներգրավված հաստատություններից բացի, մարզի վարչական տարածքում բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն մատուցող այլ ընկերությունների հետ փոխհամագործակցության աշխատանքների իրականացումը,

դ) արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների հետևանքների գնահատումը, դրա հիման վրա ծառայության պլանի ճշգրտումը,

ե) մասնակցությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժությունների անցկացմանը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ծառայության վրա դրված քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման համար պահանջվող ուժերն ու միջոցները ստեղծվում են մարզի տարածքում բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն մատուցող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա,

3.2 ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը, իսկ անմիջական /ընթացիկ/ ղեկավարումը՝ ծառայության պետը,

3.3 քաղաքացիական պաշտպանության միջոցառումները պլանավորելու և ղեկավարելու համար ստեղծվում է ծառայության շտաբ,

3.4 քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար համապատասխան կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա ծառայությունը ստեղծում է իր գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

4. ԾԱՌՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ՝

ա) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման,

բ) պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների կատարման համար,

գ) հետևում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստականությանը,

դ) սահմանում է հսկողություն քաղաքացիական պաշտպանության համակարգի համապատասխան պատրաստականության աստիճանների բերման ընթացքում ծառայության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նպատմամբ,

ե) կազմակերպում է ծառայության ղեկավար կազմի ազդարարումը և հավաքը,

զ) ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանը և ապահովում է դրանցով նախատեսված միջոցառումների իրականացումը,

է) հանրապետական բնակչության հատուկ սպասարկումների ծառայության հետ կազմակերպում է համագործակցություն և տեղեկատվության փոխանակում,

ը) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի ՔՊ պետին:

4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏԸ՝

ա) կազմակերպում և ապահովում է ծառայության շտաբի անձնակազմի ղեկավարումը,

բ) համակարգում և ապահովում է ծառայության պետի հրամանների, կարգադրությունների և հրահանգների կատարումը,

գ) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում ծառայության կազմավորումների կողմից պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ,

դ) ելնելով օպերատիվ իրավիճակից ճշգրտում է ծառայության պլանը և իրականացվող միջոցառումների ցանկը,

ե) ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ծառայության պետի հետ կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը,

զ) վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և ելնելով դրանից ծառայության պետի հետ պատրաստում է առաջարկություններ ուղղված մարզի քաղաքացիական պաշտպանության պետին,

է) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ փոխգործակցությունը,

ը) ծառայության պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է ծառայության շտաբի պետը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-ն որոշման համաձայն:

Հավելված N 3
ՀՀ Արարատի մարզպետի
2023թ. 12.04 -ի N 352 որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԱԼ- ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայությունը (այսուհետ ծառայություն) ստեղծվում է մարզի տարածքում կոմունալ-տեխնիկական ծառայություններ մատուցող կազմակերպությունների բազայի հիման վրա:

1.2 Ծառայությունը ստեղծվում է (վերակազմակերպվում է) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ:

1.3 Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» 384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզային քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.4 Ծառայության գործունեության նպատակը և առարկան է իր իրավասությունների շրջանակներում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

1.5 Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետը:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՅՆԵՐԸ

2.1 Ծառայության խնդիրներն են.

ա) քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ոլորտի միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի բարձր պատրաստականության աստիճանների բերման ժամանակ,

բ) ծառայության կազմավորումների ստեղծումը և ապահովումը մշտական պատրաստության վիճակում,

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումը և մարզի քաղաքացիական պաշտպանության պետին անհետաձգելի

վթարավերականգնողական աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

դ) լիազոր մարմնի կողմից կառավարման մարմիններին և բնակչությանը ազդարարման օժանդակության ցուցաբերումը, ռազմական դրության ժամանակ մարզի պահանջներից ելնելով՝ կապուղիներով ապահովման աշխատանքների համակարգումը:

ե) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կայունության բարձրացման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը.

զ) էներգամատակարարման համակարգի գործունեության կայունության միջոցառումների պլանավորման ու իրականացման կազմակերպումը,

էլեկտրամատակարարման ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը,

է) գազամատակարարման ապահովման կազմակերպումը.

2.2 Ծառայությունն իր վրա դրված խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) ծառայության կանոնադրության և պլանի մշակումը, սահմանված կարգով համաձայնեցման և հաստատման ներկայացումը,

բ) մարզի տարածքում կոմունալ-տեխնիկական ծառայություն մատուցող ընկերությունների հետ փոխհամագործակցության իրականացումը, ռազմական դրության և արտակարգ իրավիճակների ժամանակ օգտագործվող տեխնիկայի տրամադրման հայտերի ձևավորումը և անհրաժեշտ հաշվարկների իրականացումը,

գ) քաղաքացիական պաշտպանության հանրապետական կոմունալ-տեխնիկական ծառայությանը տեխնիկայի տեսակների տրամադրման հայտերի ներկայացումը,

դ) ծառայությունում ներգրավված կոմունալ-տեխնիկական ծառայությունից բացի, մարզի վարչական տարածքում կոմունալ-տեխնիկական ծառայություն մատուցող այլ ընկերությունների հետ փոխհամագործակցության աշխատանքների իրականացումը,

ե) արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների հետևանքների գնահատումը, դրա հիման վրա ծառայության պլանի ճշգրտումը,

զ) մասնակցությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժությունների անցկացմանը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ծառայության վրա դրված քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման համար պահանջվող ուժերն ու միջոցները ստեղծվում են մարզի տարածքում կոմունալ-տեխնիկական ծառայություն մատուցող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա,

3.2 ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը, իսկ անմիջական /ընթացիկ/ ղեկավարումը՝ ծառայության պետը,

3.3 քաղաքացիական պաշտպանության միջոցառումները պլանավորելու և ղեկավարելու համար ստեղծվում է ծառայության շտաբ,

3.4 քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար համապատասխան կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա ծառայությունը ստեղծում է իր գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

4. ԾԱՌՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ՝

ա) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման,

բ) պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների կատարման համար,

գ) հետևում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստականությանը,

դ) սահմանում է հսկողություն քաղաքացիական պաշտպանության համակարգի համապատասխան պատրաստականության աստիճանների բերման ընթացքում ծառայության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նպատմամբ,

ե) կազմակերպում է ծառայության ղեկավար կազմի ազդարարումը և հավաքը,

զ) ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանը և ապահովում է դրանցով նախատեսված միջոցառումների իրականացումը,

է) հանրապետական կոմունալ-տեխնիկական ծառայության հետ կազմակերպում է համագործակցություն և տեղեկատվության փոխանակում,

ը) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի ՔՊ պետին:

4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏԸ՝

ա) կազմակերպում և ապահովում է ծառայության շտաբի անձնակազմի ղեկավարումը,

բ) համակարգում և ապահովում է ծառայության պետի հրամանների, կարգադրությունների և հրահանգների կատարումը,

գ) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում ծառայության կազմավորումների կողմից պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ,

դ) ելնելով օպերատիվ իրավիճակից ճշգրտում է ծառայության պլանը և իրականացվող միջոցառումների ցանկը,

ե) ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ծառայության պետի հետ կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը,

զ) վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և ելնելով դրանից ծառայության պետի հետ պատրաստում է առաջարկություններ ուղղված մարզի քաղաքացիական պաշտպանության պետին,

է) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ փոխգործակցությունը,

ը) ծառայության պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է ծառայության շտաբի պետը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-Ն որոշման համաձայն:

Հավելված N 4
ՀՀ Արարատի մարզպետի
2023թ.12.04 -ի N 352 որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայությունը (այսուհետ ծառայություն) ստեղծվում է մարզի տարածքում տրանսպորտային ծառայություններ մատուցող կազմակերպությունների բազայի հիման վրա:

1.2 Ծառայությունը ստեղծվում է (վերակազմակերպվում է) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ:

1.3 Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» 384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզային քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.4 Ծառայության գործունեության նպատակը և առարկան է իր իրավասությունների շրջանակներում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

1.5 Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետը:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Ծառայության խնդիրներն են.

ա) քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառառության ոլորտի միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի բարձր պատրաստականության աստիճանների բերման ժամանակ,

բ) ծառայության կազմավորումների ստեղծումը և ապահովումը մշտական պատրաստության վիճակում,

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումը և մարզի քաղաքացիական պաշտպանության պետին առաջարկությունների ներկայացումը,

դ) լիազոր մարմնի կողմից կառավարման մարմիններին և բնակչությանը ազդարարման օժանդակության ցուցաբերումը, ռազմական դրության ժամանակ մարզի պահանջներից ելնելով՝ տրանսպորտային ծառայության ապահովման աշխատանքների համակարգումը:

2.2 Ծառայությունն իր վրա դրված խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) ծառայության կանոնադրության և պլանի մշակումը, սահմանված կարգով համաձայնեցման և հաստատման ներկայացումը,

բ) մարզի տարածքում տրանսպորտային ծառայություն մատուցող ընկերությունների հետ փոխհամագործակցության իրականացումը,

գ) բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների տրանսպորտային ապահովման կազմակերպումը.

դ) արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների հետևանքների գնահատումը, դրա հիման վրա ծառայության պլանի ճշգրտումը,

ե) մասնակցությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժությունների անցկացմանը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ծառայության վրա դրված քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման համար պահանջվող ուժերն ու միջոցները ստեղծվում են մարզի տարածքում տրանսպորտային ծառայություն մատուցող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա,

3.2 ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը, իսկ անմիջական /ընթացիկ/ ղեկավարումը՝ ծառայության պետը,

3.3 քաղաքացիական պաշտպանության միջոցառումները պլանավորելու և ղեկավարելու համար ստեղծվում է ծառայության շտաբ,

3.4 քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար համապատասխան կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա ծառայությունը ստեղծում է իր գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

4. ԾԱՌՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ՝

ա) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման,

բ) պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների կատարման համար,

գ) հետևում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստականությանը,

դ) սահմանում է հսկողություն քաղաքացիական պաշտպանության համակարգի համապատասխան պատրաստականության աստիճանների բերման ընթացքում ծառայության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նպատմամբ,

ե) կազմակերպում է ծառայության ղեկավար կազմի ազդարարումը և հավաքը,

զ) ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանը և ապահովում է դրանցով նախատեսված միջոցառումների իրականացումը,

է) հանրապետական տրանսպորտային ծառայության հետ կազմակերպում է համագործակցություն և տեղեկատվության փոխանակում,

ը) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի ՔՊ պետին:

4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏԸ՝

ա) կազմակերպում և ապահովում է ծառայության շտաբի անձնակազմի ղեկավարումը,

բ) համակարգում և ապահովում է ծառայության պետի հրամանների, կարգադրությունների և հրահանգների կատարումը,

գ) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում ծառայության կազմավորումների կողմից պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ,

դ) ելնելով օպերատիվ իրավիճակից ճշգրտում է ծառայության պլանը և իրականացվող միջոցառումների ցանկը,

ե) ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ծառայության պետի հետ կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը,

զ) վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և ելնելով դրանից ծառայության պետի հետ պատրաստում է առաջարկություններ ուղղված մարզի քաղաքացիական պաշտպանության պետին,

է) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ փոխգործակցությունը,

ը) ծառայության պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է ծառայության շտաբի պետը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-ն որոշման համաձայն:

Հավելված N 5
ՀՀ Արարատի մարզպետի
2023 թ. 12.04 -ի N358 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայությունը (այսուհետ ծառայություն) ստեղծվում է մարզի տարածքում ինժեներական ծառայություններ մատուցող կազմակերպությունների բազայի հիման վրա:

1.2 Ծառայությունը ստեղծվում է (վերակազմակերպվում է) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ:

1.3 Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» 384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզային քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.4 Ծառայության գործունեության նպատակը և առարկան է իր իրավասությունների շրջանակներում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

1.5 Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետը:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Ծառայության խնդիրներն են.

ա) քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառառության ոլորտի միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի բարձր պատրաստականության աստիճանների բերման ժամանակ,

բ) ծառայության կազմավորումների ստեղծումը և ապահովումը մշտական պատրաստության վիճակում,

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումը և մարզի քաղաքացիական պաշտպանության պետին անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

դ) լիազոր մարմնի կողմից կառավարման մարմիններին և բնակչությանը ազդարարման օժանդակության ցուցաբերումը, ռազմական դրության ժամանակ մարզի պահանջներից ելնելով՝ ինժեներական ծառայության ապահովման աշխատանքների համակարգումը:

2.2 Ծառայությունն իր վրա դրված խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) ծառայության կանոնադրության և պլանի մշակումը, սահմանված կարգով համաձայնեցման և հաստատման ներկայացումը,

բ) մարզի տարածքում ինժեներական ծառայություն մատուցող ընկերությունների հետ փոխհամագործակցության իրականացումը, ռազմական դրության և արտակարգ իրավիճակների դեպքում՝ հակառակորդի հարձակման վտանգի կամ հարձակման ժամանակ բնակչության պատսպարման նպատակով պաշտպանական կառույցների վաղօրոք նախապատրաստման, պահպանման, շահագործման և վերանորոգման միջոցառումների կազմակերպումը,

գ) պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրումը,
քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից՝ բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների նպատակահարմար տեղաբաշխման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

դ) շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների շինարարության անվտանգության ու հուսալիության ապահովման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,
փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ինժեներական ապահովման կազմակերպումը

ե) արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների հետևանքների գնահատումը, դրա հիման վրա ծառայության պլանի ճշգրտումը,

զ) մասնակցությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժությունների անցկացմանը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ծառայության վրա դրված քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման համար պահանջվող ուժերն ու միջոցները ստեղծվում են մարզի տարածքում ինժեներական ծառայություն մատուցող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա,

3.2 ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը, իսկ անմիջական /ընթացիկ/ ղեկավարումը՝ ծառայության պետը,

3.3 քաղաքացիական պաշտպանության միջոցառումները պլանավորելու և ղեկավարելու համար ստեղծվում է ծառայության շտաբ,

3.4 քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար համապատասխան կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա ծառայությունը ստեղծում է իր գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

4. ԾԱՌՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ՝

ա) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման,

բ) պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների կատարման համար,

գ) հետևում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստականությանը,

դ) սահմանում է հսկողություն քաղաքացիական պաշտպանության համակարգի համապատասխան պատրաստականության աստիճանների բերման ընթացքում ծառայության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նպատմամբ,

ե) կազմակերպում է ծառայության ղեկավար կազմի ազդարարումը և հավաքը,

զ) ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանը և ապահովում է դրանցով նախատեսված միջոցառումների իրականացումը,

է) հանրապետական ինժեներական ծառայության հետ կազմակերպում է համագործակցություն և տեղեկատվության փոխանակում,

ը) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի ՔՊ պետին:

4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏԸ՝

ա) կազմակերպում և ապահովում է ծառայության շտաբի անձնակազմի ղեկավարումը,

բ) համակարգում և ապահովում է ծառայության պետի հրամանների, կարգադրությունների և հրահանգների կատարումը,

գ) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում ծառայության կազմավորումների կողմից պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ,

դ) ելնելով օպերատիվ իրավիճակից ճշգրտում է ծառայության պլանը և իրականացվող միջոցառումների ցանկը,

ե) ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ծառայության պետի հետ կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը,

զ) վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և ելնելով դրանից ծառայության պետի հետ պատրաստում է առաջարկություններ ուղղված մարզի քաղաքացիական պաշտպանության պետին,

է) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ փոխգործակցությունը,

ը) ծառայության պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է ծառայության շտաբի պետը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-ն որոշման համաձայն:

Հավելված N 6
ՀՀ Արարատի մարզպետի
2023թ. 12.04 -ի N 352 որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայությունը (այսուհետ ծառայություն) ստեղծվում է մարզի տարածքում բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություններ մատուցող կազմակերպությունների բազայի հիման վրա:

1.2 Ծառայությունը ստեղծվում է (վերակազմակերպվում է) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ:

1.3 Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» 384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզային քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.4 Ծառայության գործունեության նպատակը և առարկան է իր իրավասությունների շրջանակներում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

1.5 Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետը:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Ծառայության խնդիրներն են.

ա) քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ոլորտի միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի բարձր պատրաստականության աստիճանների բերման ժամանակ,

բ) ծառայության կազմավորումների ստեղծումը և ապահովումը մշտական պատրաստության վիճակում,

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումը և մարզի քաղաքացիական պաշտպանության պետին անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

դ) լիազոր մարմնի կողմից կառավարման մարմիններին և բնակչությանը ազդարարման օժանդակության ցուցաբերումը,

ե) գյուղատնտեսական կենդանիների և բույսերի, անասնաբուծական ու բուսաբուծական արտադրանքի, գյուղատնտեսական նպատակների համար օգտագործվող ջրային աղբյուրների և

ոռոգման նպատակով օգտագործվող ջրամատակարարման ցանցերի պաշտպանության միջոցառումների կազմակերպումն և իրականացումը,

զ) վտանգավոր տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի պաշարների դուրսբերման աշխատանքների կազմակերպումը:

2.2 Ծառայությունն իր վրա դրված խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) ծառայության կանոնադրության և պլանի մշակումը, սահմանված կարգով համաձայնեցման և հաստատման ներկայացումը,

բ) մարզի տարածքում բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն մատուցող ընկերությունների հետ փոխհամագործակցության իրականացումը,

գ) ծառայությունում ներգրավված բույսերի և կենդանիների պաշտպանության օպերատորներից բացի, մարզի վարչական տարածքում բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն մատուցող այլ ընկերությունների հետ փոխհամագործակցության աշխատանքների իրականացումը,

դ) արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների հետևանքների գնահատումը, դրա հիման վրա ծառայության պլանի ճշգրտումը,

ե) մասնակցությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժությունների անցկացմանը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ծառայության վրա դրված քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման համար պահանջվող ուժերն ու միջոցները ստեղծվում են մարզի տարածքում բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն մատուցող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա,

3.2 ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը, իսկ անմիջական /ընթացիկ/ ղեկավարումը՝ ծառայության պետը,

3.3 քաղաքացիական պաշտպանության միջոցառումները պլանավորելու և ղեկավարելու համար ստեղծվում է ծառայության շտաբ,

3.4 քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար համապատասխան կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) բազայի հիման վրա ծառայությունը ստեղծում է իր գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

4. ԾԱՌՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ՝

ա) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման,

բ) պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների կատարման համար,

գ) հետևում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստականությանը,

դ) սահմանում է հսկողություն քաղաքացիական պաշտպանության համակարգի համապատասխան պատրաստականության աստիճանների բերման ընթացքում ծառայության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նպատմամբ,

ե) կազմակերպում է ծառայության ղեկավար կազմի ազդարարումը և հավաքը,

զ) ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանը և ապահովում է դրանցով նախատեսված միջոցառումների իրականացումը,

է) հանրապետական գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության ծառայության հետ կազմակերպում է համագործակցություն և տեղեկատվության փոխանակում,

ը) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի ՔՊ պետին:

4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏԸ՝

ա) կազմակերպում և ապահովում է ծառայության շտաբի անձնակազմի ղեկավարումը,

բ) համակարգում և ապահովում է ծառայության պետի հրամանների, կարգադրությունների և հրահանգների կատարումը,

գ) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում ծառայության կազմավորումների կողմից պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ,

դ) ելնելով օպերատիվ իրավիճակից ճշգրտում է ծառայության պլանը և իրականացվող միջոցառումների ցանկը,

ե) ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ծառայության պետի հետ կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը,

զ) վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և ելնելով դրանից ծառայության պետի հետ պատրաստում է առաջարկություններ ուղղված մարզի քաղաքացիական պաշտպանության պետին,

է) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ փոխգործակցությունը,

ը) ծառայության պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է ծառայության շտաբի պետը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-ն որոշման համաձայն:

Հավելված N 7
ՀՀ Արարատի մարզպետի
2023թ.12.04 -ի N 352 որոշում

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Քաղաքացիական պաշտպանության Արարատի մարզային նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի՝ քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ Արարատի մարզպետի Աշխատակազմի ֆինանսական վարչության բազայի հիման վրա:

2. Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» №384-Ն որոշմամբ, վերադասի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3. Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման կազմակերպումը:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Ծառայության խնդիրներն են.

1) Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը.

2) քաղաքացիական պաշտպանության անհրաժեշտ կազմավորումների ստեղծման, դրանց անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով ապահովման, պատրաստման և մշտական պատրաստականության վիճակում պահպանման կազմակերպումը.

3) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության պետին՝ մարզպետին, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

5. Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով կազմակերպում է հետևյալ գործառույթները.

1) Ծառայության անձնակազմի պատրաստում.

2) ոլորտում գործող կազմակերպությունների և ուժերի նախապատրաստում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում միջոցառումների կազմակերպման ապահովման համար.

3) ռազմական գործողությունների պատճառով ստեղծված իրավիճակի հետախուզում, գնահատում, վերլուծում և դրանց հիման վրա ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում.

4) տարահանված բնակչությանը պարենային և այլ ապրանքների մատակարարման, փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող կազմավորումների նյութատեխնիկական անհրաժեշտ միջոցներով ապահովման կազմակերպումը.

5) բնագավառի գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա անվտանգության, նորմատիվ փաստաթղթերի պահանջների իրականացման ապահովում:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար ոլորտում գործող կազմակերպությունների բազաների հիման վրա ծառայության պետի առաջարկությամբ կարող են ստեղծվել ծառայության գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

7. ՈՒժերի տեսակները՝ կազմավորումները (ջոկատները, խմբերը, օղակները) և օգտագործվող միջոցների քանակն ու տեսակը, ելնելով խնդիրների ծավալից, որոշում է ծառայության պետը:

8. Ծառայության ընդհանուր ղեկավարումը կազմակերպում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը՝ մարզպետը, իսկ անմիջական (ընթացիկ) ղեկավարումը՝ ծառայության պետը:

9. Ծառայության պետի որոշմամբ, ղեկավար կազմից և աշխատակիցներից ստեղծվում է ծառայության շտաբ, որը պլանավորում ու ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները:

10. Ամենօրյա ընթացիկ աշխատանքների պլանավորման և կազմակերպման համար աշխատողներից նշանակվում է պատասխանատու(ներ):

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Ծառայության պետի իրավունքները.

1) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման.

2) կազմակերպում է համայնքներում և կազմակերպություններում ստեղծված համապատասխան կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ.

3) Ծառայության ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.

4) վերահսկում է ծառայության կազմավորումների գործունեությունը:

12. Ծառայության պետի պարտականությունները.

1) ապահովում է կապը մարզային կառավարման կետի, քաղաքացիական պաշտպանության վերադաս, համայնքային և կազմակերպությունների համապատասխան ծառայությունների հետ.

2) ղեկավարում է ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստությունը.

3) կազմակերպում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումները.

4) կազմակերպում է ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումը և հավաքը.

5) ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանը և ապահովում պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.

6) պատրաստի վիճակի է բերում ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն.

7) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետին՝ մարզպետին.

8) Ծառայության պետը պատասխանատվություն է կրում ծառայության անձնակազմի պատրաստականության համար:

13. Ծառայության շտաբի պետի իրավունքները.

1) կազմակերպում է ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ.

2) վերահսկում է ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակում պահպանումը.

3) Ծառայության անձնակազմին ու ոլորտի կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ապահովում է ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը.

4) ելնելով իրավիճակից ճշգրտում է ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.

5) ծառայության պետի որոշումների պահանջների կատարման ընթացքում ենթականերին տալիս է հրահանգներ, առավել կարևոր հրահանգների մասին շտաբի պետը զեկուցում է ծառայության պետին:

14. Ծառայության շտաբի պետի պարտականությունները.

1) Ծառայության պետի բացակայության դեպքում ստանձնում է ծառայության ընթացիկ ղեկավարումը.

2) պլանավորում է ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց կազմակերպումը.

3) ապահովում է ծառայության կայուն ղեկավարումը և մշտական պատրաստ վիճակում է պահում կառավարման կետը.

4) պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացքում հեռանկարային աշխատանքները.

5) ապահովում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետախուզությունը, վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և պատրաստում է ծառայության պետի տեղեկատվությունը՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետին.

6) կազմակերպում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում ռազմավարական նշանակության և բնակչության կենսաապահովման օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները.

7) ապահովում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների միջև փոխհամագործակցությունը.

8) փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման համար օգտագործում է կապի բոլոր տեսակի միջոցները:

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

15. Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի №134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №46-Ն որոշման համաձայն:

16. Ծառայության պետի, շտաբի և կազմավորումների անձնակազմերի տեսական գիտելիքների և գործնական ունակությունների կատարելագործումն կազմակերպվում է տարբեր մակարդակներում անցկացվող հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական վարժանքների և այլ ուսումնավարժություններում նրանց ընդգրկման միջոցով:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Լ.ԽԱՉԱՏՐՅԱՆ